№ 200 Նոյեմբերի 16 (28) 1879 Նոյեմբերի 16 (28) № 200

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ստորագրութիւն ընդունվում է ամէն ընդունակ խմբագրատան մէջ.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ

Ստորագրողները դիմում են այսպէս
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը.— Ներքին տեսութիւն. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.— Արտաքին տեսութիւն. Նամակ Թիւրքիայից.— Հեռագիրներ.— Յայտարարութիւններ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Քաղաքական բոլոր նշանաւոր լրագիրները զբաղված են Անգլիայի և Թիւրքիայի փոխադարձ յարաբերութիւններով: Այդ հարցը այնքան նշանաւոր է, այնքան հետաքրքրական է բոլոր լրագիրների համար, որ միւս քաղաքական հարցերը անուշադիր է թողած նրանց կողմից:

Այժմ նշանաւոր անցքերը, որ պատահեցին վերջին շաբաթվայ ընթացքում՝ իտալական մինիստրութեան հրաժարականը և իսպանական մինիստրութեան առաջարկութիւնը ազգային ժողովին Կուբա կղզու ստրուկների ազատելու մասին:

Նոյեմբերի 6-ին հրաժարական տուեց պ. Կայրոլի կազմած իտալական մինիստրութիւնը, որ միայն մի քանի ամիս կառավարում էր երկիրը:

Այդ մինիստրութիւնը սկզբից թոյլ էր և ոչ որ չէր հաւատում նորա երկարատևութեանը: Լրագիրները հետևեալ հանգամանքները պատմում են համարում Կայրոլի մինիստրութեան թուլութեան համար: Իտալական պարլամենտի ձախ կողմի ոչ մի բաժնի առաջնորդներից կամ նշանաւոր անդամներից չը կանգնած մինիստրութեան մէջ, չը նայելով, որ Կայրոլի դրա համար շատ աշխատեց: Երկրորդ մինիստրութիւնը մի քանի բացառութեամբ կազմված էր նոր մարդիկներից, անվարժներից որոնք անյայտ էին պարլամենտին և չէին ցոյց տուել իրանց քաղաքական ընդունակութիւնները: Այդ պատճառով Կայրոլի մինիստրութիւնը կազմելու ժամանակ ցանկանում էր, որ կաբինետի մէջ մտնեն ձախ կուսակցութեան անդամներից մի քանիսը, բայց նրան չը յաջողվեց, չը նայելով, որ բաւական ժամանակ բանակցում էր այդ կուսակցութեան անդամների հետ:

Բացի այն, որ Կայրոլի մինիստրութիւնը այդ քան թոյլ էր, նրա անդամներն էլ միմեանց հետ համաձայն չէին: Մինիստրութեան գոյութեան բոլոր ժամանակը անհամաձայնութիւններ էին ծագում անդամների մէջ զանազան հարցերի պատճառով: Վերջին անգամ, երբ մինիստրների խորհուրդը քննում էր աղացածի հարկի մասին, մինիստրութիւնը երկու հակառակ կուսակցութիւնների բաժանվեցաւ, որ և առիթ եղաւ հրաժարականի: Այդ հարկի մասին բաժանված մինիստրութիւններ միջև այսպիսի վախճանի են հասցնում: Այս անգամ էր, ինչպէս առաջ, մինիստրութեան մի կէսը պահանջում էր, որ չքաւորների մէջ աղացած նուէր հարկի նեխարկելն, միւս բաժինը բոլորովին մերժում էր այդ հարկը:

Սպանական մինիստրութեան կողմից ազգային ժողովին ներկայացրած օրէնքի նախագիծը Կուբա կղզու ստրուկներին ազատելու մասին, Սպանիայի համար մեծ նշանակութիւն ունի:

Կուբա կղզու ստրուկները անդադար ապստամբում էին, իրանց ազատութիւնը պահանջելով: Սպանական կենտրոնական կառավարութիւնը անդադար մեծ ծախսեր պէտք է անէր կղզու վրա հանդարտութիւն պահպանելու համար: Մինչև անգամ ներկայ բոլորում ապստամբական զօրքերի մի մասը զանվում է Կուբա կղզու վրա և աշխատում է ձեռք ձգել ստրուկների ազատութիւնը:

Լրագիրները յոյս ունեն, որ ազգային ժողովը կընդունի այդ նոր օրէնքի նախագիծը, որ շատ օգուտներ է խոստանում երկրին:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

28 Հոկտեմբերի

[illegible]

Ե. Հ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

[illegible]

[illegible]

[illegible] «Самоучитель—учебникъ грузинскаго языка» [illegible] գինն է 50 կ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Պօլիս, 16 Նոյեմբերի

[illegible]